

Շուվային կաթնասունների պաշտպանության միջազգային օր

Դելֆինների բանտարկումը դելֆինաբիումներում անմարդկային և անօրինական արարք է: Ցանկացած դեպքում, մենք միասնաբար դեմ ենք հանրային զվարճության կամ դելֆինների օգնությամբ իրականացվող թերապիայի: Խրոնիկ հոգեկան կամ ֆիզիկական հիվանդություններ ունեցող մարդիկ չպետք է դիմեն դելֆինների օգնությամբ «բուժման» միջոցներին, զգուշացնում են Էմորի համալսարանի գիտանկանները:

«Դելֆինաթերապիան» չի կարող բուժել որևէ հիվանդություն», -ասում է դելֆինների և կետերի առաջատար մասնագետ Մարինոն: «Մենք ուզում ենք հասկացնել հասարակությանը, որ այդ երևույթը երկուստեք բացասական անդրադարձ ունի, թե՛ մարդկանց, թե՛ դելֆինների վրա»: Դելֆինների հետ լողալը կարող է հաճելի, նոր զգացողություններ տալ, սակայն չկա ոչ մի գիտական հիմնավորում, որ այդ գործողությունը ունակ է որևէ այլ երկարաժամկետ դրական արդյունքի բերել: Նա ավելացնում է, որ մարդիկ, որոնք հազարավոր դոլարներ են ծախսում «դելֆինաթերապիա» անցնելու համար, ոչ միայն ֆինանսապես են տուժվում, այլև ենթարկում են թե՛ իրենց, թե՛ դելֆիններին վնասվածք կամ ինֆեկցիոն հիվանդություն ստանալու վտանգին: Բացի այդ, նրանք նպաստում են մի «բիզնեսի», որը կտրում է դելֆիններին վայրի բնական միջավայրից: Այս դաժան գործընթացի արդյունքում՝ շատ հաճախ մեկ կենդանի բռնված դելֆինը արժենում է մի քանի դելֆինի կյանք:

Մարինոն և Լիլինֆելդը ուսումնասիրել են վերջին 8 տարվա ընթացքում հրապարակված 5 հետազոտություն և եկել այն համոզման, որ «դելֆինաթերապիայի» արդյունավետությանը վերաբերող դրույթները ճշմարտությանը չեն համապատասխանում:

«Մենք եկել ենք այն եզրահանգմանը, որ «դելֆինաթերապիան» կասկածի տակ առնող մեր առաջին հոդվածից մինչև օրս որևէ համոզիչ ապացույց չի եղել «դելֆինաթերապիայի» օրինական արդյունավետ բուժման ձև լինելու կամ մարդու տրամադրության մեջ փոփոխությունից ավելի ազդեցություն ունենալու: Մենք ուզում ենք այս ուղերձը հասցնել հոգեբաններին, որովհետև «դելֆինաթերապիան» ավելի ու ավելի հաճախ է կիրառվում զարգացողական թերություններով երեխաների բուժման համար, թեև չկա ոչ մի հիմնավորում, որ այդ բուժումն արդյունավետ է», ասում է կլինիկական հոգեբան Լիլինֆելդը:

«Դժվար է պատկերացնել ռացիոնալ հիմնավորում մի տեխնիկայի համար, որի առավելագույն արդյունքը երեխայի կարճաժամկետ լավ ինքնազգացողությունն է, այն էլ՝ հետագա վնասակար ազդեցության վտանգի առկայությամբ: Շատ մարդիկ թյուր կարծիք ունեն, թե դելֆինները երբեք չեն վնասի մարդուն: Իրականում վնասվածքի հնարավորությունը մեծ է, երբ երեխային դնում են ակվարիումի մեջ 2 տոննա կշռող

վայրի կենդանու հարևանությամբ, որը կարող է բռնվելու հետևանքով խախտված հոգեբանություն ունենալ», -ասում է Մարինոն:

Հեզնանք կարծես լինի՝ դելֆինները աշխարհի ամենասիրված և միևնույն ժամանակ ամենաշահագործվող կենդանիներն են», -նշում է Մարինոն:

Ամերիկյան համալսարանների ասոցիացիայի անդամ «Էմորի» համալսարանը ԱՄՆ առաջատար գիտահետազոտական հաստատություններից մեկն է: Դելֆինների որսի ու ազատագրվման ընթացքում, որը դաժան գործողություն է, այս վայրի ծովային կենդանիները շոկի և սթրեսի են ենթարկվում՝ իրենց բնական, դինամիկ, էկոլոգիապես հարուստ շրջակա միջավայրից կտրվելով և փակ, անբնական միջավայր տեղադրվելով: Անազատության մեջ դելֆինները հաճախ տառապում են խոցերից և ագրեսիվ վերաբերմունք դրսևորում իրենց ցեղակիցների և մարդկանց հանդեպ: Նման պայմաններում դելֆիններ են վիրավորվել և նույնիսկ սպանվել մարդիկ, այդ թվում նաև փորձառու վարժեցնողներ, որոնք ստացել են վնասվածքներ:

Դելֆինները վայրի կենդանիներ են և մյուս կետագիների նման շատ խելացի, գիտակից ու զգայուն արարածներ են: Նրանք օգտագործում են բիոսոնարի մի ձև, սակայն անազատության մեջ նրանց ուլտրաձայները անդրադարձվում են փոքր ավազանի բետոնի պատերից: Փակվելով ակվարիումային «ցուցափեղկերում», այս կենդանիները ոչ միայն ազատությունից են զրկվում, այլև բնական կենսակերպի պայմաններից, ինչպիսիք են օրական 40 մղոն լողալը, կենդանի կերը և վտառի հետ շփումը:

Հայաստանի կլիման բոլորովին չի համապատասխանում դելֆինների կամ որևէ այլ ծովային կենդանիների գոյատևման համար: Հայաստանի ամառները շոգ են, չոր, ձմեռները՝ ցրտաշունչ: Ավելին, Հայաստանի բարձրությունը կտրուկ տարբերվում է ծովային երկրներից: Այս կլիմայական և աշխարհագրական գործոնները կարող են շատ վտանգավոր լինել դելֆինների և այլ ծովային կաթնասունների համար: Անհնար է դելֆինի գոյատևման համար անհրաժեշտ բոլոր պայմանները ստեղծել անազատության մեջ, հատկապես ՀՀ-ում: Մեզ անհանգստացնում է նաև այն փաստը, որ դելֆինարիումի շինարարությունը սկսվեց առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և հասարակական լսումների: Սա ուղղակիորեն հակասում է Օրհուսի կոնվենցիային, քանի որ կառույցի համար օգտագործվելու է մաքուր խմելու ջուր: Նախագծի իրականացումը չպետք է թույլ տրվեր առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման:

Հայաստանը չպետք է հանդուրժի դելֆինարիումների գործունեությունը և միանա այն երկրների ցանկին, ինչպիսիք են Չիլին, Կիպրոսը, Խորվաթիան և Կոստա Ռիկան, Թուրքիան, Վրաստանը և հիմա արդեն Ռուսաստանը՝ որոնք դեմ են նմանատիպ կառույցներին: Դելֆիններին պահելը ամբողջ աշխարհում կասկածելի գործունեություն է՝ վերը նշված պատճառներով: Նման կառույցի գործունեությունը Հայաստանում բացասական միջազգային արձագանք կխթանի: Մենք պետք է հաշվի առնենք դելֆինների բարեկեցությունը, ինչպես նաև երկրի համբավը և դադարեցնենք ՀՀ-ում դելֆինարիայի շահագործումը:

Հուսով եմք, որ ՀՀ կառավարությունը պատասխանատու և կարեկից որոշում կկայացնի՝ կասեցնելով դեֆինարիումի շահագործումը մեր երկրում: